

Հայաստանում
պետական
պաշտոնյաների
կողմից
դրսևորված
ատելության
խոսքը
ԼԳԲՏ անձանց
նկատմամբ

2004-2018



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հետազոտության հեղինակ՝ Հասմիկ Պետրոսյան

Գեղարվեստական խմբագիր՝ Կարինե Աղաջանյան

Հետազոտությունն իրականացվել է «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Բաց Հասարակության Հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ

Էլ-փոստ՝ info@pinkarmenia.org

Վեբ-կայք՝ www.pinkarmenia.org

Երևան, 2019

Բովանդակություն

Էջ	Վերնագիր
2	1.1 Ներածություն
4	2. Մեթոդաբանություն
5	3. Ատելության խոսքի արգելքի իրավական վերլուծությունը
9	3.1 Ատելության խոսքի ծանրության աստիճանները
9	3.2 Ատելության խոսքի արգելքի վեցաստիճան թեստ
10	3.3 Ատելության խոսքը և պետության պարտավորությունները
12	3.4 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան և ատելության խոսքը
13	3.5 Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսք
15	3.6 Ներպետական օրենսդրություն
17	4. ՀՀ պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքի դեպքերը 2004-2018թթ.
26	5. Եզրակացություն
27	6. Առաջարկություններ պետական մարմիններին
28	7. Հապավումների ցանկ
28	8. Հիմնական հասկացություններ

1. Ներածություն

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները¹»:

Հետազոտություններն ու զեկույցները ցույց են տալիս, որ ԼԳԲՏ մարդիկ Հայաստանում ամենախտրականացված խմբերի շարքում են: Ինչպես վկայում է «Փիևք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏի անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն»-ը, պարզվում է, որ հարցվածների 95%-ն ունեն հոմոֆոբ տեսակետներ²:

Հոմոֆոբիայի այս բարձր ցուցանիշը չի մնացել առանց հետևանքների: Ամեն տարի արձանագրվում են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված մարդու իրավունքների խախտումների տասնյակ դեպքեր: ԵԱՀԿ-ն և ԺՄԻԳ-ը հրապարակում է ատելության հիմքով հանցագործությունների զեկույցներ, որոնք հիմնված են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և պետության կողմից տրված տվյալների վրա³:

Ցավոք սրտի, Հայաստանը երբեք չի տրամադրել որևէ պաշտոնական տեղեկատվություն ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, և Հայաստանի իրավակիրառ մարմինները չեն վարում ատելության հիմքով հանցագործությունների վիճակագրություն⁴:

Այնուամենայնիվ, սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվություն ԺՀՄԻԳ-ին ներկայացվել է հասարակական կազմակերպությունների կողմից:

Փիևք Արմենիան հետազոտել է Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունները և ատելության շարժառիթով պայմանավորված միջադեպերը ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ ուսումնասիրելով 198 դեպքեր⁵:

Այդ դեպքերի 79.7%-ում հարցվածները եղել են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններից տուժածներ, իսկ 20.3%-ում՝ վկաներ:

¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 81, available at: <https://www.president.am/hy/constitution-2015/>

² «Փիևք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏի անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն». <http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf>

³ OSCE ODIHR, hate crime reporting, Armenia, available at: <http://hatecrime.osce.org/armenia>

Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ՌԱԵՀ-ի զեկույցները ցույց են տալիս, որ դրանք հիմնական պայմանավորված են տուժողի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությանը:

Խտրականության բարձր մակարդակը և ատելության հիմքով միջադեպերը ցույց են տալիս, որ հոմոֆոբիայի տարածվածությունը Հայաստանում ունի ծանր հետևանքներ, մասնավորապես, հաշվի առնելով այն, որ պետության համար չկան մեխանիզմներ արձագանքելու այդպիսի դեպքերին և հիմնական մեղավորներն իշխող կուսակցությունների ներկայացուցիչներ են, ովքեր երբեք չեն պատժվել իրենց գործողությունների համար և շարունակել են պաշտոնավարել:

Հայաստանը վավերացրել է ԶԶԻՄԴ, ՌԽՎԿ, ՏՍՄԻԴ 1993թ-ին: Այս փաստաթղթերը չեն պարունակում դրույթներ, որոնք ուղղակիորեն արգելում են սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը թիրախավորող ատելության խոսքը, բայց այս փաստաթղթերի հիման վրա ստեղծված մարմինները ավելի լայն մեկնաբանություն են տվել՝ ներառելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ատելության խոսքից պաշտպանված հատկանիշների ցանկում:

Հետազոտության նպատակը և կառուցվածքը

Այս հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքի դրսևորումները՝ պայմանավորված անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերով: Հետազոտության ենթակա ժամանակահատվածն ընդգրկում է 2004-ից 2018թթ., ժամանակահատված, երբ Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ և վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան:

Միանալով ՄԻԵԿ-ին, ՀՀ-ն ստանձնեց պարտավորություն պաշտպանել իր վերահսկողության ներքո տարածքում գտնվող անհատների մարդու իրավունքները և կանխել ցանկացած բռնություն կամ խտրականություն:

Հետազոտությունը բաղկացած է երկու մասից.

- Մաս 1-ին, որում ներկայացված է ատելության խոսքն արգելող իրավական կարգավորումները, ներառյալ՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերով պայմանավորված ատելության խոսքի արգելքը.

- Մաս 2-րդ, որում ներկայացված է պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքի ակնառու դեպքերը: Դրանք բաժանված են խմբերի՝ ըստ իրենց ծանրության և բնույթի, ներառյալ՝ կոնտեքստի վերլուծությունը:

Հետազոտության 1-ին մասը ներառում է ատելության խոսքի սահմանումը, ինչպես է այն հասկացվում ՄԱԿ-ի և ԵԽ մարմինների կողմից, այս մարմինների կողմից արված մեկնաբանություններն ու անդամ պետություններին ուղղված հանձնարարականները, ՀՀ ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև անհատներին ու խմբերին սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքից պաշտպանելու արդյունավետ իրավական միջոցների առկայությունը: 2-րդ մասում ներկայացված

ատելության խոսքի դեպքերի մեծամասնությունը հնչեցվել է պատգամավորների կամ այլ պաշտոնյաների կողմից խորհրդարանական լուսմների կամ մամուլի ասուլիսների ժամանակ:

Այդ խորհրդարանական լուսմներն ու հարցազրույցները հեռարձակվում են ուղիղ եթերով կամ լրատվական հեռուստաալիքներով՝ տարբեր մեդիա աղբյուրների կողմից: Որպես այդպիսին, այս հետազոտությունում նույնականացված ատելության խոսքի միջադեպերը կարող են մեկնաբանվել որպես լայնատարած ազդեցություն ունեցող հայ հասարակության և ներպետական երկխոսության վրա:

Հետազոտության վերջին մասը պարունակում է պետական մարմիններին ուղղված առաջարկներ, կոնկրետ քայլերի վերաբերյալ, որոնք վերջիններս պետք է իրականացնեն որպես ժողովրդավարական հանրապետություն՝ միջազգային փաստաթղթերով և ՀՀ Սահմանադրությամբ ստանձնած պարտավորությունների կատարման համար:

2. Մեթոդաբանությունը

Այս հետազոտությունը հիմնված է հետևյալ 31 առցանց մեդիա աղբյուրների վրա.

✓	1in.am	✓	Civilnet.am	✓	NT.am
✓	168.am	✓	Epress.am	✓	Panarmenian.net
✓	7or.am	✓	golosarmenii.am	✓	Panorama.am
✓	A1plus.am	✓	Hetq.am	✓	Pastinfo.am
✓	Araratnews.am	✓	Hraparak.am	✓	Replik.am
✓	Aravot.am	✓	Ilur.am	✓	Slaq.am
✓	Armlur.am	✓	Irates.am	✓	ert.am
✓	Armtimes.com	✓	Iravunq.com	✓	Zham.am
✓	Asekose.am	✓	Lragir.am	✓	LGBTnews.am
✓	Aysor.am	✓	Lurer.com		
✓	Chi.am	✓	News.am		

Վերոնշյալներից ինը նաև տպագիր մամուլ են հանդիսանում: Այս ցանկը, բացի «LGBTnews.am»-ից, վերցված է «Հայկական մեդիա աշխարհը. լրատվամիջոցներ և աղբյուրներ»⁶ հետազոտությունից: «LGBTnews.am»-ն ընտրվել է այս հետազոտության համար որպես մի մեդիա աղբյուր, որը առավելապես անդրադառնում է LԳԲՏ հարցերին:

Այս հետազոտությունում ընդգրկված ատելության խոսքի միջադեպերը վերցված են ՀՀ ԱԺ պատգամավորների ելույթներից կամ մամուլի ասուլիսներից, ինչպես նաև այլ պետական պաշտոնյաների հարցազրույցներից, ինչպիսիք են Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները և ՀՀ ոստիկանապետը: Այս խոսքերից յուրաքանչյուրը հրապարակվել է մի շարք մեդիա աղբյուրներում, սակայն այս հետազոտության մեջ ընդգրկված է յուրաքանչյուր միջադեպի համար միայն մեկ հղում:

^{4,5} Փինք Արմենիա, «LԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում».
http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/11/hate-crime-monitoring-2016_hy.pdf

3. Ատելութեան խոսքի արգելքի իրավական վերլուծությունը

Ատելութեան խոսքի հասկացությունը

Միջազգային իրավունքում չկա ատելութեան խոսքի համընդհանուր ընդունված սահմանում: Այնուամենայնիվ, ատելութեան խոսքը սահմանվել և կարգավորվել է միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, ինչպես նաև՝ այդ փաստաթղթերի հիման վրա ստեղծված մարմինների մեկնաբանություններում:

Կարևոր է նույնականացնել ատելութեան խոսքի և արտահայտման ազատութեան սահմանները: Արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունք է, որն ընկած է ժողովրդավարական ինստիտուտների հիմքում՝ երաշխավորելով մի կողմից անձնական կարծիքի ազատ արտահայտումը և հանրային կառավարման և որոշում կայացնելու գործընթացների հետ կապված գաղափարների տարածումը և մյուս կողմից պետական կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Սակայն արտահայտման ազատությունը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել որոշակի հանգամանքներում:

ՄԱԿ-ի Զաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,

գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ այս շահերի պաշտպանության համար⁷: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:

Որպեսզի արտահայտման ազատության սահմանափակումը լինի օրինական, այն պետք է բավարարի հետևյալ բոլոր պահանջներին.

- Նախատեսված լինի օրենքով. ինչը նշանակում է, որ ազգային

իրավակարգավորումները ճշգրտորեն պետք է նշեն այն իրավիճակները կամ խոսքի

կոնտենտը (բովանդակությունը), որը չի պաշտպանվում արտահայտման ազատության

իրավունքով:

- Չետապնդեն օրինական նպատակ. ինչը նշանակում է, որ վերագրյալում նշված իրավական դրույթները պետք է ունենան իրենց նպատակը՝ պաշտպանել այլոց իրավունքներն և հեղինակությունը, ազգային անվտանգությունը կամ հասարակական

կարգը, կամ հանրային առողջությունը, կամ բարոյականությունը:

- Լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ինչը որոշվում է յուրաքանչյուր դեպքում:

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»⁸:

Հարկ է նշել, որ այս երկու հոդվածները փոխկապակցված են, և որ արտահայտման ազատությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ թույլ տա ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության ջատագովություն, որը հրահրում է խտրականության, թշնամանքի կամ բռնության: Մարդու իրավունքների կոմիտեն, հղում անելով 19-րդ և 20-րդ հոդվածների միջև հարաբերությունը, հաստատում է, որ արտահայտման ազատության սահմանափակումը 20-րդ հոդվածի հիման վրա, պետք է համապատասխանի նաև 19-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆին⁹:

Սա նշանակում է, որ ճանաչելով արտահայտման ազատության կարևոր դերը ժողովրդավարական հասարակությունում անհատների կողմից իրենց իշխանությունն իրացնելու և որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցություն ունենալու գործում, ԸԲԻՄԴ-ն, այնուամենայնիվ պարտավորեցնում է պետություններին արդյունավետ քայլեր ձեռնարկել պաշտպանելու իր քաղաքացիներին ատելության խոսքից:

Ըբմդնի սկզբունքները, որոնց նպատակն է հաստատել պետությունների պարտավորությունները՝ ապահովելու արտահայտման ազատությունը և արտահայտման ցանկացած սահմանափակում, որը պետք է հարգվի ժողովրդավարական հասարակություններում, անդրադարձել է Դաշնագրի 20(2)-րդ հոդվածին՝ սահմանելով հետևյալ հասկացությունները.

ա) «ատելություն» և «թշնամանք» հասկացությունները վերաբերում են վիրավորական ինտենսիվ և իռացիոնալ էմոցիաներին, թիրախ խմբի նկատմամբ թշնամությանն ու ատելությանը.

բ) «ջատագովություն» տերմինը, այս դեպքում, հասկացվում է որպես թիրախ խմբի նկատմամբ հանրային կերպով ատելություն սերմանելու դիտավորության պահանջ.

գ) «հրահրում» տերմինը վերաբերում է ազգային, ռասսայական կամ կրոնական խմբերի մասին դիրքորոշումներին, որոնք ստեղծում են խտրականության, թշնամանքի կամ բռնության անմիջական վտանգ այն մարդկանց նկատմամբ, ովքեր պատկանում են այդ թիրախ խմբին:

դ) Տարբեր համայնքների կողմից խմբի ինքնության դրական ընկալմանն ուղղված խոսքի տարածումը ատելության խոսք չի համարվում¹⁰:

ՄԱԿ-ի ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման դեմ միջազգային

⁶ «Հայկական մեդիա աշխարհը. լրատվամիջոցներ և աղբյուրներ». <https://www.osce.org/hy/yerevan/195791?download=true>

^{7,8} Միացյալ Ազգերի Կազմակերպություն (1948), Զաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 20(2)-րդ հոդված:

<https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/ccpr.pdf>

⁹ Զաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 34-րդ հանձնարարական 2011 թ.

¹⁰ Camden principles, 12.1 <https://www.article19.org/wp-content/uploads/2009/04/Camden-Principles-ENGLISH-web.pdf>

¹¹ International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, Available at: <https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/cerd.pdf>

կոնվենցիան չի կիրառում «ատելության խոսք» տերմինը, որը չի խոչընդոտում ՌԻՎԿ-ին սահմանել «ատելության խոսքը»՝ հիմնվելով կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքների վրա:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածը սահմանում է.

«Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասսայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա, կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասսայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն և, այդ նպատակով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքների ու սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում շարադրված իրավունքներին համապատասխան, այդ թվում՝

(ա) օրենքով պատժելի հանցանք են համարվում ռասսայական գերազանցության կամ ռասսայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասսայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասսայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեության ֆինանսավորումը,

(բ) հակաօրինական են հայտարարվում և արգելվում են այն կազմակերպությունները, ինչպես նաև կազմակերպված ու ցանկացած այլ քարոզչական գործունեություն, որոնք խրախուսում ու հրահրում են ռասսայական խտրականությունն ու մասնակցությունը նման կազմակերպություններին, կամ գործունեությունը համարում են օրենքով պատժելի հանցագործություն,

(գ) պետական իշխանության ազգային կամ տեղական մարմիններին, կամ պետական հաստատություններին չեն թույլատրում խրախուսել կամ հրահրել ռասսայական խտրականություն»¹¹:

ՌԻՎԿ-ն, մասնավորապես, սահմանում է ատելության խոսքը որպես. «ուղղորդված խոսքի ձև, որը մերժում է մարդկային արժանապատվության և հավասարության մարդու հիմնարար իրավունքների սկզբունքները և նպատակ ունի խաթարել հասարակության գնահատման մեջ անհատների և խմբերի դիրքերը»¹²:

Ատելության խոսքը կարող է դրսևորվել տարբեր ձևերով և կարող է ունենալ տարբեր ազդեցություն տուժածի վրա: Այն կարող է հանգեցնել բռնության, թշնամական կամ խտրական գործողությունների՝ հիմնված տուժածի պաշտպանված հատկանիշների վրա:

Որոշ դեպքերում, ատելության խոսքը կարող է համարվել անձի հոգեկան ամբողջականության խախտում և միջամտություն նրա մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին:

Ատելության խոսք կարող է համարվել ոչ միայն անհատի կամ մի խումբ անձանց

ստորացման, ատելության կամ դավադրության ջատագովություն, խթանում կամ հրահրում, այլ նաև ցանկացած ոտնձգություն, վիրավորանք, բացասական կարծրատիպացում, սիգմատիզացիա, կամ վերաբերմունք անհատի կամ մի խումբ անձանց նկատմամբ և այս բոլոր արտահայտման ձևերի ցանկացած արդարացում՝ հիմնված պաշտպանված հատկանիշների ոչ սպառնիչ ցանկի կամ կարգավիճակի վրա¹³:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը հաստատում է հետևյալը.

«Ատելության խոսքի օգտագործումը կարող է հանգեցնել ոչ միայն թիրախավորված անձանց վախի և վտանգի զգացումի, այլ նաև՝ առանց որևէ արդարացման, մեղավորության, ամոթի և նվաստացման՝ հանգեցնելով անինքնավստահության և ինքնագնահատականի կորստին: Ավելին, այդ զգացումները կարող են հանգեցնել ֆիզիկական ախտանիշների, ինչպիսիք են՝ քնի կորուստն ու գլխացավերը, ինչպես նաև՝ մտավոր և ֆիզիկական առողջության ավելի լուրջ բնույթի խնդիրներ: Արդյունքում, նման զգացումները կարող են ունենալ հետևանքներ կյանքի բոլոր ասպեկտներում, լինի աշխատավայրում, դպրոցում, կամ տանը. դրանց ազդեցությունը ընտանեկան հարաբերությունների վրա և հասարակական կյանքին մասնակցելու պատրաստակամության վրա չափազանց վտանգավոր է¹⁴:

Գրականությունում, ատելության խոսքը տարբերակվում է և հիմնված է այն վնասի վրա, որը պատճառվել է կամ նախատեսվել է, որ կպատճառվի: Վնասը կարող է պատճառված լինել որպես ատելության խոսքի հետևանք՝ գործողությունների միջոցով, և կարող է ինքին խոսքում պարունակվել¹⁵:

Այլ կերպ ասած, խոսքը, որը բաղկացած է արտահայտություններից, որոնք վիրավորական են և կարող են հանգեցնել նվաստացման կամ հոգեբանական տազնապի: Վնասը կարող է լինել խոսքի ուղղակի հետևանք, այդպիսի խոսքը տարածում է անհանդուրժողականություն և հոմոֆոբիա, և կարող է հետագայում նպաստել բռնությունների կամ խտրականության անհատի կամ խմբի հանդեպ, որոնք թիրախավորված են:

¹² UN Committee on the Elimination of Racial Discrimination, General Recommendation No. 35 on combatting racist hate speech, 26 September 2013, CERD/C/GC/35, para 10

¹³ CoE European Commission against Racism and Intolerance, General policy recommendation, available at: <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01>

¹⁴ Տես՝ նախորդ հղումը, պարագրաֆ 105

3.1 Ատելության խոսքի ծանրության աստիճանները

Կարևոր է հստակ նույնականացնել այն ատելության խոսքը, որը պատժելի է քրեական օրենսդրությամբ և այն, որը կարող է հանգեցնել քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության՝ միևնույն ժամանակ կանխելով արտահայտման ազատության սահմանափակման չարաշահումը: Այն ուղիները, որոնցով պետությունները պետք է անդրադառնան ատելության խոսքին, կարող են բաժանվել երեք կատեգորիաների՝ կախված ատելության խոսքի ծանրության աստիճանից¹⁶:

Մասնավորապես, ատելության խոսքը պետք է արգելվի քրեական, քաղաքացիական, վարչական օրենսդրությամբ՝ ԶԲԻՄԴ 20(2)-րդ հոդվածից ելնելով: Եթե այն պարունակում է թշնամանքի, խտրականության կամ բռնության հրահրում որոշակի խմբի նկատմամբ, ապա կարող է պատասխանատվություն առաջացնել քրեական օրենսդրության համաձայն: Խոսքը, որն ինքնին քրեական իրավախախտում է իր նվաստացնող, վիրավորող և հետապնդող եղությամբ կարող է համարվել ատելության հիմքով հանցագործություն¹⁷:

Երկրորդ խումբ դեպքերում, ատելության խոսքը կարող է արգելվել ԶԲԻՄԴ 19(3)-րդ հոդվածի ուժով, եթե այն համապատասխանում է արտահայտման ազատության թուլյատելի սահմանափակումներին: Այդպիսի դեպքերում, տուժածը նույնականացվող անհատ է, և խոսքն ինքնին կարող է համարվել ոտնձգող անգամ այն դեպքում, երբ այն չի պարունակում բռնության հրահրում, խտրականություն կամ թշնամանք:

Երրորդ խումբ դեպքերում, ատելության խոսքը, որը տարածում է անհանդուրժողականություն, բայց բավականաչափ ծանր չէ, կարող է պաշտպանվել արտահայտման ազատության իրավունքի ուժով: Սակայն պետք է պետության կողմից ճանաչվի անընդունելի՝ որպես ատելության խոսքի ծանր դեպքերի և որպես դրա արդյունք բռնությունների, խտրականության, ինչպես նաև հասարակության կողմից որոշակի հատկանիշներով տարբերվող անձանց այլ կերպ թիրախավորման կանխարգելիչ միջոց:

3.2 Ատելության խոսքի արգելքի վեցաստիճան թեստ

Խտրականություն, թշնամանք կամ բռնություն հրահրող ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության ջատագովության արգելքի վերաբերյալ Գործողությունների Ռաբաթ պլանը պարունակում է պետություններին ուղղված ատելության խոսքին վերաբերող առաջարկություններ:

Այն առաջարկում է վեցաստիճան թեստ նույնականացնելու, թե արդյոք ատելությունը պարունակող արտահայտությունը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության¹⁸, թե ոչ:

ա) Կոնտեքստը. Կարևոր է վերլուծել քաղաքական և սոցիալական կոնտեքստը, որտեղ ատելության խոսքը դրսևորվել է գնահատելու խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրման դիտավորությունը խոցելի խմբերի և պատճառահետևանքային կապը խոսքի և հնարավոր բռնության կամ խտրական գործողության միջև:

բ) Խոսնակը. Երկրորդը, կարևոր է հաշվի առնել խոսնակի դիրքորոշումն ու հեղինակությունը, ով կարող է ունենալ ազդեցություն հասարակությունում որոշակի խմբերի վրա:

գ) Նպատակը. Եթե ատելության խոսքը չի դրսևորվել դիտավորությամբ, դրա արգելքը կարող է պարտադիր չլինել: Սա նշանակում է, որ անփութորեն հնչեցված ատելության խոսքը կարող է սահմանափակվել ԶԲԻՄԴ 19(3)-հոդվածով կամ կարող է քննադատվել հանրային հեղինակությունների կողմից, բայց չպատժվել որպես քրեական իրավախախտում: Նպատակը ատելության խոսքի անօտարելի մասերից մեկն է՝ արգելված ԶԲԻՄԴ 20(2)-րդ հոդվածով, քանի որ այն համարվում է ատելություն, խտրականություն պարունակող վերաբերմունքի ջատագովություն:

դ) Կոնտենտը (բովանդակությունը) և ձևը. Անհրաժեշտ է վերլուծել խոսքի կոնտենտը, որպեսզի գնահատենք սադրիչ էությունը:

ե) Խոսքի ծավալը. Լսարանը, տարածման միջոցները, հանրայնությունը, հասանելիությունը, հաճախականությունը, և խոսքի քանակն այն փաստերն են, որ պետք է համարվեն գործողության ծավալի դիտարկման համար: Ծավալը կարևոր է գնահատելու խոսքի տարածումը:

զ) Հավաստիությունը, ներառյալ՝ ռիսկային լինելը. Ատելության խոսքի հրահրման պատճառով հետագա գործողությունների արգելքի համար դրանք պետք է լինեն իրական և պարունակեն խտրական, թշնամական կամ բռնության գործողությունների արդյունքում նույնականացվող ռիսկեր:

3.3 Ատելության խոսքը և պետության պարտավորությունները

Պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն ապահովելու ոչ միայն իրենց կողմից ատելության խոսքի տարածումից ձեռնպահ մնալը, այլ նաև կանխարգելեն ատելության խոսքի տարածումը և հետևանքներ նախատեսեն այն անհատների համար, ովքեր այդպիսի խոսք օգտագործելու համար մեղավոր են: Պարտադիր պահանջ է, որ պետությունները հարգեն մարդու իրավունքները և կանխեն դրանց ուղղությամբ անօրինական միջամտությունները: Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժողական հաղորդագրություններից կամ արտահայտություններից, որոնք հրահրում են բռնություն, թշնամանք կամ խտրականություն. բայց նրանք նաև վճռորոշ դեր պետք է ունենան և կոչտ և անհապաղ հանդես գան անհանդուրժողականության դեմ, կարծրատիպային խտրականության և ատելության խոսքի հրահրման դեմ:

Կարևոր է չթերագնահատել պետական պաշտոնյաների ազդեցությունը հասարակական վերաբերմունքի ձևավորման վրա՝ իրենց հեղինակությամբ և լայնամասշտաբ լսարանով: Արդյունքում, պետական պաշտոնյաների հեղինակած խոսքը, որը հրահրում է ատելություն, խտրականություն և բռնություն, շատ ավելի վտանգավոր է, քան այն խոսքը, որը հնչել է սահմանափակ սոցիալական ազդեցություն ունեցող անձի կողմից. Այդպիսի լայն ազդեցություն ունեցող խոսքը բարձրացնում է հնարավոր խտրականության և բռնի գործողությունների ռիսկերը:

Պետական պաշտոնյաները ոչ միայն պետք է խուսափեն օգտագործել խոսքեր, որոնք խրախուսում են բռնությունը կամ խտրականությունը, այլ նաև պետք է իրենց հեղինակությունն օգտագործեն՝ նպաստելու մարդու իրավունքների նկատմամբ հավասարության, հանդուրժողականության և հարգանքի սերմանմանը:

Լռություն պահպանելը, և՛ խտրականությունը և՛ անհավասարությունը դատապարտելուց ձեռնպահ մնալը կարող է դիտարկվել որպես ատելության տարածմանը նպաստելու մեկ այլ ձև: Իրենց պոզիտիվ պարտականությունների շրջանակում պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն պաշտպանելու անհատներին կամ համայնքներին խտրականությունից կամ բռնությունից՝ հիմնված իրենց պաշտպանված հատկանիշների վրա:

Այդպիսի միջոցները պետք է ներառեն ոչ միայն օրենսդրական բարեփոխումներ, այլ նաև՝ այնպիսի մեխանիզմների և քաղաքականությունների մշակում, որոնց միջոցով կստեղծվի հավասարության և ոչ խտրական միջավայր: Պետությունների կողմից ատելության խոսքի դեմ պայքարելու համար Ռաբբաթ պլանը նախատեսում է հետևյալ քայլերը²⁰.

42. Պետությունները պետք է մեծացնեն իրենց ներգրավվածությունը անհատների և համայնքների նկատմամբ բացասական կարծրատիպերի և խտրականության դեմ պայքարի ընդհանուր ջանքերում՝ հիմնված նրանց ազգության, էթնիկ ծագման, կրոնի կամ հավատքի վրա:

43. Պետությունները պետք է նպաստեն միջմշակութային փոխըմբռնմանը, ներառյալ՝ գենդերային զգայունակության առումով: Հետևաբար, պետությունները պատասխանատվություն ունեն ստեղծելու խաղաղության մշակույթ և պարտավորություն վերջ դնելու անպատժելիությունը:

44. Պետությունները պետք է նպաստեն և ապահովեն դասընթացների անցկացումը մարդու իրավունքների արժեքների և սկզբունքների վերաբերյալ և ներդնեն կամ հզորացնեն միջմշակութային փոխըմբռնումը՝ որպես բոլոր տարիքի աշակերտների համար դպրոցական ուսումնական ծրագրի մի մաս:

45. Պետությունները պետք է զարգացնեն անվտանգության ուժերի, իրավակիրառ մարմինների և արդարադատության իրականացման մեջ ներգրավված անձանց վերապատրաստելու կարողությունների զարգացում՝ այն հարցերում, որոնք անդրադառնում են ատելության հրահրման արգելքին:

46. Պետությունները պետք է քննեն հավասարության մարմիններ ստեղծելու հարցը, կամ ընդլայնեն ազգային իրավապաշտպան հաստատությունների գործառույթները /որոնք ստեղծվել են փարիզյան սկզբունքներին համապատասխան/՝ ընդլայնված իրավասություններ տալով նրանց՝ խթանելու սոցիալական երկխոսությունը, ինչպես նաև՝ ընդունելու ատելության հրահրման դեպքերի հետ կապված գանգատները:

47. Պետությունները պետք է ապահովեն անհրաժեշտ մեխանիզմներ և հաստատություններ, որպեսզի համակարգված տվյալներ հավաքագրվեն՝ ատելության հրահրման հետ կապված իրավախախտումների վերաբերյալ:

48. Պետությունները պետք է ունենան հանրային քաղաքականություն և կարգավորման շրջանակ, որը խթանում է բազմակարծությունը և ՉԼՄ-ների բազմազանությունը, ներառյալ՝

նոր լրատվամիջոցների, և որը խթանում է համընդհանրությունն ու հակախտրականությունն հաղորդակցման միջոցների հասանելիության և օգտագործման առումով:

49. Պետությունները պետք է ուժեղացնեն առկա մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմները, մասնավորապես՝ մարդու իրավունքների պայմանագրային մարմինները, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների կոմիտեն կամ Ռասսայական խտրականության վերացման կոմիտեն, ինչպես նաև հատուկ ընթացակարգերի մանդատ կրողները, քանի որ դրանք ապահովում են խորհրդատվություն և աջակցություն պետություններին՝ կապված մարդու իրավունքների պաշտպանության իրագործման համար ազգային քաղաքականությունների հետ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն սահմանում է ատելության խոսքը հետևյալ կերպ. «արտահայտման բոլորը ձևերը, որոնք տարածում, դրդում, հրահրում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը, կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ անհանդուրժողականությունն արտահայտված ագրեսիվ ազգանայնականությամբ, ազգակենտրոնությամբ, խտրականությամբ և թշնամանքով փոքրամասնությունների, միգրանտների և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ»²¹: Այդպիսի խոսքերը պետք է արգելվեն օրենքով և հրապարակայնորեն դատապարտվեն:

3.4 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան և ատելության խոսքը

ՄԻԵԿ-ը չի պարունակում ատելության խոսքն ուղղակիորեն արգելող որևէ դրույթ: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկնաբանում է արտահայտման ազատության սահմանափակումը 17-րդ հոդվածի ներքո, համաձայն որի՝ որևէ գործողություն, որն ուղղված է կոնվենցիայով երաշխավորված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը, արգելվում է: Արտահայտման ազատությունը ճանաչվում է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով, որի 2-րդ պարբերությամբ ամրագրված է արտահայտման ազատության սահմանափակումները:

ՄԻԵԿ-ը հաստատում է, որ արտահայտման ազատության իրավունքով չի պաշտպանվում ցանկացած խոսք, որը հակասում է Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքներին²²: Սեռական կողմնորոշումը պաշտպանված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով,

¹⁵ Maitra, I., & McGowan, M. K. (Eds.) (2012a). *Speech and Harm: Controversies over Free Speech*. Oxford: Oxford University Press.

¹⁶ Approach suggested by Article 19, based on UN Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression, annual report to the General Assembly, 7 September 2012, A/76/357, Available at: <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N12/501/25/PDF/N1250125.pdf?OpenElement>

¹⁷ <http://hatecrime.osce.org/what-hate-crime>

¹⁸ Rabat Plan of Action, Available at: https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

¹⁹ Rabat Plan of Action, para. 36, https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

²⁰ Ibid, para. 42-49

²¹ Council of Europe's Committee of Ministers, Recommendation No. R(97)20 of the Council of Europe Committee of Ministers on "Hate Speech," 30 October 1997, available at: <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505d5b>

²² *Seurot v. France*, app. No 57383/00,

որը երաշխավորում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնամխելիությունը: ՄԻԵԴ-ն իր նախադեպային պրակտիկայում ճանաչում է սեռական կողմնորոշումը որպես անհատի հոգեկան ամբողջականության մասն, որի խախտումը կարող է համարվել մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ոտնահարում : Յետևաբար, սեռական կողմնորոշման հիմքով պայմանավորված ատելության խոսքի դեպքում, որը չի հասնում այն ծանրության աստիճանին, որպեսզի համարվի անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք, այն դեռ կարող է համարվել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնամխելիության իրավունքի ոտնահարում:

Քննելով ատելության խոսքը, որը չի պարունակում բռնության հրահրում, սակայն հիմնված է խտրականության վրա, ՄԻԵԴ-ը գտել է մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ոտնահարում²³: Ակտուն ընդդեմ Թուրքիայի գործով, մասնավորապես, պետությունը ձախողել էր բացահայտել ատելության խոսքի դեպքը²⁴: Այդպիսի խոսքերը չեն կարող պաշտպանվել արտահայտման ազատության իրավունքով: Հակառակ դեպքում այն կհանգեցնեի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերացմանը:

3.5 Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսք

Միջազգային իրավակարգավորումներից պարզ է դառնում, որ ատելության խոսքն ուղղված է անհատի կամ որոշակի խումբ անձանց դեմ՝ պայմանավորված իրենց պաշտպանված հատկանիշներով: Պաշտպանված հատկանիշ ասելով հասկանում ենք՝ անձի կամ մի խումբ անձանց առանձնահատկությունը, որը կազմում է անձի կամ անձանց խմբի ինքնության մի մասը, ինչպիսիք են՝ սեռը, ռասսան, էթնիկ ծագումը, մաշկի գույնը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, կրոնը և այլն:

Այս դիրքորոշումը հիմնված է միջազգային և տարածաշրջանային մարմինների մեկնաբանությունների և հանձնարարականների վրա: Իրավական կարգավորումների զարգացումը և մեկնաբանություններն ուղղակիորեն կապված են այն ժամանակաշրջանի կարիքների հետ, երբ դրանք ստեղծվել են: Համապատասխանաբար, ռասսայական, ազգային կամ կրոնական խտրականության և ատելության խոսքի արգելքի կարգավորումները վկայում են այն կարիքների մասին, որոնք եղել են առաջին միջազգային պայմանագրերը ստեղծելիս:

Այս առաջին պայմանագրերից ստեղծված մարմինները ընդլայնեցին խտրականության հասկացության ծավալը և ճանաչեցին սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականությունը և ատելության խոսքը՝ դրանով իսկ հաստատելով ատելության խոսքի արգելքը՝ հիմնված այս պաշտպանված հատկանիշների վրա և համապատասխանաբար, գործողություններ իրականացնելու պետության պարտավորությունները: Մարդու իրավունքների կոմիտեի դիրքորոշման համաձայն՝

ԶԲԻՄԴ-ը պաշտպանում է խտրականությունից՝ հիմնված սեռական կողմնորոշման վրա: Այն «սեռ» տերմինը մեկնաբանում է՝ որպես պաշտպանված հատկանիշ, որը ներառում է սեռական կողմնորոշումը²⁵:

Հայաստանի վերաբերյալ զեկույցում ՌԱԵՀ-ը, հղում կատարելով ՀՀ օրենսդրական բացերին, նշում է ատելության խոսքը և ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը: Մասնավորապես, այն առաջարկում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակորեն ավելացվեն ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով²⁶ նախատեսված պաշտպանված հատկանիշների ցանկում, և որ նոր դրույթով օրենսգիրքը հստակորեն նախատեսի հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը որպես ցանկացած սովորական իրավախախտման ծանրացնող հանգամանք²⁷: ՌԻՄԿ-ն իր պրակտիկայում անդրադառնում է ատելության խոսքին՝ ուղղված ոչ միայն ռասսայական, էթնիկ, կրոնական խմբերին, այլ նաև այլ խոցելի խմբերին՝ տալով ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի լայն մեկնաբանություն²⁸:

Եվրախորհրդի նախարարների կոմիտեն առաջարկում է, որ անդամ պետությունները ձեռնարկեն համապատասխան միջոցներ պայքարելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի դեմ, ներառյալ՝ ատելության խոսքը տարածված մեդիայի միջոցով և համացանցով, միևնույն ժամանակ՝ հարգելով խոսքի ազատությունը: Կոմիտեն նաև առաջարկում է բարձրացնել հանրային իրազեկվածությունը հանրային հեղինակությունների և հաստատությունների շրջանում՝ կանխելու ատելության խոսքը, կենտրոնանալով մեդիայի վրա, որտեղ ատելությունն ու խտրականությունը հաճախ խթանվում է:

ՌԱԵՀ-ը ներառում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պաշտպանված հատկանիշների ցանկում՝ սահմանելով ատելության խոսքը իր՝ ատելության խոսքի վերաբերյալ ընդհանուր քաղաքականության հանձնարարականում²⁹:

ՄԻԵԴ-ը, անդրադառնալով խտրականության կարգավորումներին, իր վճիռներում տվել է պաշտպանված հատկանիշների ոչ սպառնիչ ցանկի վերաբերյալ մեկնաբանություն: Մասնավորապես, այն հաստատել է, որ խտրականության արգելքը հիմնված սեռական կողմնորոշման վրա, ոչ պակաս խնդրահարույց է, որքան խտրականությունը՝ հիմնված սեռի, ռասսայի, կամ մաշկի գույնի վրա³⁰:

Յոգյակարտի սկզբունքներում մարդու իրավունքները մեկնաբանվում են ներառելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հատկանիշներ: Յոգյակարտի սկզբունքները հաստատում են, որ անհատները պետք է պաշտպանվեն ցանկացած բռնությունից կամ խտրականությունից՝ հիմնված նրանց որևէ հատկանիշի վրա, և մեկնաբանում, թե ինչպես կարող են սեռական փոքրամասնությունները պաշտպանված լինել մարդու իրավունքների համատեքստում³¹:

²³ Smith and Grady v. UK, app. No 33985/96

²⁴ Aksu v. Turkey, app. N 4149/04 41029/04

²⁵ Toonen v. Australia, Communication No. 488/1992, U.N. Doc CCPR/C/50/D/488/1992 (1994)

²⁶ Ազգային, ռասսայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասսայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները

²⁷ CoE European Commission against Racism and Intolerance, Report on Armenia, available at: <https://rm.coe.int/fourth-report-on-armenia/16808b5539>

SUSUՄԴ-ի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ ամրագրվում է, որ Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել Դաշնագրով հռչակված իրավունքների իրացումը առանց որևէ խտրականության, անկախ ռասսայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթից:

SUSUՄԴ-ն մեկնաբանել է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հատկանիշներ հասկացվում են «այլ դրույթից» ձևակերպման ներքո³²:

3.6 Ներպետական օրենսդրություն

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է. «խտրականությունը, կախված սեռից, ռասսայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է ³³» :

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է նաև, որ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասսայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով³⁴:

Ազգային, ռասսայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասսայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները քրեորեն պատժելի են ՀՀ օրենսդրությամբ³⁵:

Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է³⁶: Դա նշանակում է, որ ատելության խոսքը, որը հրահրում է թշնամանք, անհանդուրժողականություն կամ խտրականություն՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ և չի կարող հասցեավորվել իրավակիրառ մարմինների կողմից:

Եվրախորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը նախատեսում են գործողությունների ցանկ, համաձայն որի՝ անդամ պետությունները պարտավոր են պայքարել ատելության խոսքի դեմ՝ հիմնված սեռական կողմնորոշման կամ գենդերային

²⁸ Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին եվրոպական կոնվենցիա. https://www.un.am/res/UN%20Treaties/III_2.pdf

²⁹ CoE European Commission against Racism and Intolerance, General policy recommendation, available at: <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01>

³⁰ *Vejdeland and others v. Sweden*, no 1813/07, ECHR 2012

³¹ Yogyakarta Principles on the application of international human rights law in relation to sexual orientation and gender identity, March 2007, available at: <http://www.yogyakartaprinciples.org>

³² UN Committee on Economic, Social and Cultural Rights (CESCR), General comment No. 14, 15, 20

³³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 29. <https://www.president.am/hy/constitution-2015/>

³⁴ Տես՝ նախորդ հոդված 17

³⁵ ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 226, Available at: http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/Criminal_Code_2003.pdf

³⁶ Տես՝ նախորդ հոդված 5

ինքնության վրա³⁷:

Այնուամենայնիվ, ՀՀ-ն չի տրամադրել գեկույց հանձնարարականների հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված քայլերի վերաբերյալ: Հանձնարարականներն անգամ չեն թարգմանվել հայերեն, ինչը քայլերից մեկն է, միջազգային փաստաթղթի ստորագրմամբ ստանձնած իր պարտավորությունների իրականացման պատրաստակամությունն արտահայտելու ուղղությամբ³⁸:

ՌԱԵՀ նաև անդրադարձել է խորհրդարանականների կողմից արտահայտվող ատելության խոսքի խնդրին: ՌԱԵՀ-ն առաջարկում է խորհրդարանում հնարավորինս շտապ ընդունել վարքագծի կանոնագիրք, որը կնախատեսի պատասխանատվություն՝ ներառյալ (inter alia) ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ ելույթների համար³⁹:

ՌԱԵՀ-ն առաջարկում է ՀՀ իշխանություններին հանդես գալ հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության խոսքերը և բռնությունը դատապարտող հրապարակային հայտարարություններով: Այնուամենայնիվ, որբոլորքաքաղաքական կուսակցությունները դեմ հանդես գան հոմոֆոբ/տրանսֆոբ դիսկուրսներին, հատկապես այն դեպքերում, երբ իրենց անդամներն են դրանցում ներգրավված⁴⁰:

Կառավարությունը մեկնաբանություններ է արել ՌԱԵՀ որոշ առաջարկությունների՝ չանդրադառնալով անգամ վերոնիշյալ կետերին: Անդրադառնալով §54-ին, համաձայն որի՝ ՌԱԵՀ-ն առաջարկում է ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշման կամ գեներային հիմքով կամ իրենց իրավունքները պաշտպանող իրավապաշտպանների հանդեպ սպառնալիքները, հանրային ատելության կամ բռնության հրահրման դեպքերը համապատասխանաբար հետաքննվեն և պատասխանատվության ենթարկվեն, կառավարությունը պատասխանել է, որ հանձնարարականները արդարացված չեն, որովհետև բոլոր հանրային բռնության դեպքերը հետաքննվում ու պատասխանատվության են ենթարկվում⁴¹:

Կառավարության դիրքորոշումը չի արտահայտում իրականությունը, քանի որ չկան քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական մեխանիզմներ՝ նույնականացնելու և քննելու սեռական կողմնորոշման կամ գեներային ինքնության հիմքով պայմանավորված բռնության, թշնամանքի կամ խտրականության հրահրման դեպքերը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի՝ Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

Գործող «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը չի պարունակում որևէ կարգավորում քաղաքական կուսակցությունների գործունեության արգելքի վերաբերյալ, եթե նրանց գործունեությունը չի համապատասխանում ժողովրդավարության սկզբունքներին: Չկան մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր է պատասխանատվության ենթարկել քաղաքական կուսակցություններին իրենց գործողությունների համար:

³⁷ CoE Committee of Ministers, Recommendation CM/Rec(2010)5 to member states on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity

³⁸ PINK Armenia, The alternative report on the human rights of LGBT people in Armenia was presented to the CoE, available at: <http://www.pinkarmenia.org/hy/news/coe-recommendation/>

³⁹ CoE European Commission against Racism and Intolerance, General policy recommendation, para. 51, available at: <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01>

⁴⁰ CoE European Commission against Racism and Intolerance, Report on Armenia, para. 55, available at: <https://rm.coe.int/fourth-report-on-armenia/16808b5539>

⁴¹ Government's viewpoint, available at: <https://rm.coe.int/government-comments-on-the-fourth-report-on-armenia/16808b5543>

⁴² <https://www.aravot.am/2004/10/14/318867/>

⁴³ <https://www.aravot.am/2005/05/06/805348/>

4. ՀՀ պետական պաշտոնյաների կողմից դրսևորված ատելության խոսքի դեպքերը 2004-2018թթ.

Ինչպես արդեն նշվեց, ատելության խոսք են հանդիսանում արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք պարունակում են խտրականության կամ բռնության հրահրում, ինչպես նաև վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունները անհատի կամ մի խումբ անձանց նկատմամբ՝ պայմանավորված նրանց պաշտպանված հատկանիշներով:

Ատելության խոսքի դեպքերն այս բաժնում ներկայացված են ըստ իրենց ծանրության աստիճանի և բնույթի: Առաջին հերթին ներկայացված են դեպքեր, երբ խոսքը պարունակում է խտրականության կամ բռնության հրահրում: Երկրորդ հերթին ներկայացված են դեպքեր, երբ խոսքը թեև չի պարունակում ուղղակի գործողության հրահրում, սակայն դրանք նույնպես հանդիսանում են ատելության խոսք և պետք է պետության կողմից պատշաճ արձագանք ստանան:

Ատելության խոսքը՝ բնորոշված խտրականության հրահրմամբ 2004թ.-ին «Հայ Արիական Միաբանության» ղեկավար Արմեն Ավետիսյանը հայտարարել էր, որ կիրառարակի Հայաստանի նույնասեռական պաշտոնյաների ցանկը: Որպես արձագանք, ՀՀ նախագահի խորհրդական Գառնիկ Իսագուլյանը հայտարարել էր. «Եթե փաստեր լինեն, ապա դրանց անմիջապես կհետևեն կոնկրետ գործողություններ: Այսինքն՝ այդպիսի պաշտոնյաներն անմիջապես կհեռացվեն աշխատանքից»⁴²: (Ավետիսյանն այդպես էլ չիրապարակեց ցանկը):

Իսագուլյանի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ նա, որպես նախագահի խորհրդական, ոչ միայն ձախողել է՝ դատապարտելու անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնամխելիության իրավունքի ոտնահարելու փորձը, այլև՝ հաստատել է, որ ցանկում ընդգրկված պաշտոնյաները կհանդիսանան խտրականության սուբյեկտ և կկորցնեն իրենց պաշտոնները:

Սա ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականության խոստովանությունն է նախագահի խորհրդականի մակարդակով: Նման վերաբերմունքը կարող է դրսևորվել ոչ միայն պաշտոնյաների նկատմամբ, այլ նաև՝ մասնավոր գործատուների կողմից՝ իրենց աշխատավայրերում: Այն ենթադրում է, որ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերում պետությունը կխրախուսի նման վերաբերմունքը և չի ապահովի տուժած անձանց պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է Ավետիսյանի ենթադրյալ ցանկին, ապա՝ 2005թ.-ին իշխող Հանրապետական կուսակցության պատգամավոր և ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Պետրոսյանը հայտարարել էր. «Մեր ժողովուրդը նման բաները երբեք չի ընդունել, ընդհակառակը, երբ ԵԽ-ի առջև պարտավորություններ էինք ստանձնում, մենք առարկություններ արեցինք, և երբ հայտարարությունն եղավ Արմեն Ավետիսյանի կողմից, առաջին մարդը ես էի, որ գնացի եթեր և ասացի, որ նման բաներ հայտարարել պետք չէ: Եթե կան բաներ, որ մեր օրենքների

մեջ չեն տեղավորվում, պետք է գաղտնի հայտնել համապատասխան մարմիններին, որ նրանց նկատմամբ համապատասխան միջոցներ իրականացվեն: Եվ երբեք կոալիցիան չի ընդունել ձեր ասած համասեռամոլության, երկսեռության հարցերը, դա մեր ժողովրդի մտածելակերպին անհարիր է»⁴³:

Երկու դեպքերում էլ, խոսնակների դերն ու հեղինակությունը սպառնում է հրահրել հետագա խտրական գործողությունների: «Համապատասխան միջոցներ» տերմինի կիրառմամբ, պատգամավորը ի նկատի ուներ, որ նույնասեռականները պետք է «պատժվեն» օրենքի ուժով: Սա խտրականության կոչ է՝ ուղղված իրավակիրառ մարմիններին՝ օրենսդիր մարմնի ներկայացուցչի կողմից: Հետևաբար ակնհայտ է, որ այս խոսքի հնարավոր հետևանքները շատ ավելի իրական են, քան եթե դրան հնչեցված լինեին ավելի քիչ ազդեցիկ խոսնակի կողմից:

Անդրադառնալով 2013թ-ին տրանսպորտի ուղեվարձի բարձրացման դեմ երիտասարդների կողմից կազմակերպված բողոքի ակցիաներին՝ Հանրապետական կուսակցության պատգամավոր և իշխող խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը հայտարարել էր. «Միանշանակ աջակցում եմ մեր երիտասարդության այն խմբերին, որոնք պայքարում են սեռական փոքրամասնությունների դեմ: Այստեղ երիտասարդությունը կարող է մեծ ներդրում ունենալ»⁴⁴:

Նման հայտարարությունը միայն խրախուսում և խթանում է բռնությունները երիտասարդների շրջանում: Հաշվի առնելով հոմոֆոբիայի բարձր մակարդակն ու ատելության հիմքով հանցագործությունները՝ տեղ գտած հայկական հասարակական կազմակերպությունների զեկույցներում, մենք կարող ենք ենթադրել, որ մարդու իրավունքների խախտումները կշարունակվեն, քանի որ հանցագործները չեն վախենա իրավական պատասխանատվության ենթարկվելուց:

2014թ-ին Սահակյանը դարձավ ՀՀ ԱԺ խոսնակը: Սահակյանի արտահայտած ատելության խոսքը, երբ նա պատգամավոր էր, Էթիկայի հանձնաժողովի կողմից քննության առարկա չդարձավ կամ այլ կերպ գնահատականի չարժանացավ իրավակիրառ մարմինների կողմից: Դա խոչընդոտ չհանդիսացավ այլ պատգամավորների համար՝ հաջորդ տարում ընտրելու նրան որպես ԱԺ խոսնակ:

Այս երևույթն արտացոլում է Ազգային ժողովի հակա-ԼԳԲՏ վերաբերմունքը: ԼԳԲՏ քրիստոնեական ֆորումը պլանավորվում էր տեղի ունենալ Հայաստանում 2018թ.-ին:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանը, անդրադառնալով ֆորումին, հայատարարել էր. «Այո, մեր պետականության և ազգային

⁴⁴ <https://news.am/arm/news/182244.html>

⁴⁵ <https://168.am/2018/10/24/1030671.html>

⁴⁶ <https://168.am/2018/10/24/1030678.html>

⁴⁷ <https://www.iravunk.com/news/69692>

⁴⁸ <https://www.iravunk.com/news/72896>

⁴⁹ <https://www.iravunk.com/news/62851>

⁵⁰ <https://168.am/2018/11/06/1037047.html>

⁵¹ <https://www.aravot.am/2004/10/02/803340/>

⁵² <https://www.a1plus.am/37745.html>

⁵³ <https://168.am/2013/02/22/185876.html>

⁵⁴ <https://hraparak.am/post/591facc7e3d84d0d37fd3baf>

⁵⁵ <http://www.irates.am/hy/1366892821>

⁵⁶ <https://www.aravot.am/2014/07/10/478774/>

⁵⁷ <http://goo.gl/xwRS0l>

անվտանգության համար սպառնալիք է տնտեսական, քաղաքական մենաշնորհը, այո, մենք ունենք ոչ անվտանգ սահմաններ, բայց իմ խորին համոզմամբ ` մեզ համար ամենամեծ սպառնալիքը մեր ավանդական ընտանիքի հավանական խոյահարումն է: Ես էլ եմ ողջունում հեղափոխությունը, որը դեռ ավարտված չէ, ցանկացած հեղափոխության մեջ մարդիկ փնտրում են ավելի լավը, քան կա: Բայց կա մի հեղափոխություն, հարգելի պարոն Փաշինյան, որի մեջ անձամբ ես վտանգ եմ տեսնում, դա հեղափոխությունն է մեր ավանդական ընտանիքների բարքերում: Նորից եմ խնդրում, որ բոլորս համատեղենք մեր ուժերը և իրականացնենք մեզանից կախված ամեն օրինական և թույլատրելի հնարավորը` մեր ընտանիքներն այդ պետականակործան գործընթացից ապահովագրելու ուղղությամբ⁴⁵»:

Պետրոսյանը նաև հայտարարել էր, որ մասնակցելու է ԼԳԲՏ անձանց դեմ իրականացվող բողոքի ակցիաներին⁴⁶. «Ես եթե մասնակցեմ, ոչ թե որպես պատգամավոր եմ մասնակցելու, այլ որպես հայ մարդ, հայ տղամարդ, որ սկզբունքորեն դեմ է, որ համասեռամոլությունը թափանցի ավանդական ընտանիք:.. Պատերազմող երկիր ենք, շատ հետաքրքիր ա արական սեռի երկու ներկայացուցչի ինչպիսի՞ շփումից պետք է գոյանա սերունդ, որը ապագայում ստանձնի սահմանների պաշտպանությունը»⁴⁷:

Հանրապետական կուսակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը հայտարարել էր. «Պետք է ընդունել օրենք համասեռամոլության քարոզը խստիվ արգելելու մասին ⁴⁸»:

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, քաղաքագետ Գագիկ Բեռյանը հայտարարել էր. «Առաջարկում եմ խորհրդարանին հատուկ օրենքով ամրագրել, որ սեռական կողմորոշումը ու կրոնական պատկանելությունը ի ցույց դնել, քարոզել կամ հանրային քննարկման առարկա դարձնելը քրեորեն պատժելի արարք է: Արդյունքում լգտբ դրոշով քայլող ցուցարարի գլխին բամփում ենք եւ վերջ⁴⁹»:

Այս հայտարարությունների, ինչպես նաև այս պաշտոնյաների կողմից խրախուսվող ցույցերի արդյունքում ֆորումը չեղյալ հայտարարվեց:

Անդրադառնալով ֆորումի չեղարկմանը, ՀՀ ոստիկանապետ Վալերի Օսիպյանը հայտարարել էր. «Չի լինելու, որովհետև կարծում եմ, որ այս պահին նպատակահարմար չի, նաև անվտանգությունից ելնելով, մենք ինքներս էլ բացատրական աշխատանքներ ենք տարել, որպեսզի ՀՀ տարածքում տեղի չունենա այդ համաժողովը⁵⁰»:

Ատելության խոսք, որը չի պարունակում գործողությունների հրահրում

Խոսքը, որը չի պարունակում ուղղակի գործողությունների հրահրում, ևս կարող է ունենալ խորը բացասական ազդեցություն ԼԳԲՏ անձանց կյանքում: Այդպիսի խոսքերը պարունակում են անհարգալից, վիրավորական արտահայտություններ, որոնք կարող են հանդիսանալ մասնավոր կամ ընտանեկան կյանքի անձեռնամխելիության իրավունքի ոտնահարում, և որոնք խթանում են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը: Այն կարող է հանգեցնել հոգեկան ամբողջականության խախտմանը` պատճառ հանդիսանալով ֆիզիոլոգիական սթրեսի: Ատելության խոսքը, ուղղված լինելով անհատների կամ խմբերի դեմ` պայմանավորված նրանց որոշակի հատկանիշներով, բացասական ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն որոշ անհատների, այլ նաև` համայնքի վրա:

Որպես ատելություն պարունակող հռետորաբանության հետևանք, նսեմացված համայնքը թիրախավորվում է հասարակության մեծամասնության կողմից: Հասարակությունում, որտեղ տիրում է հոմոֆոբիայի ծայրաստիճան մակարդակ, այդպիսի խոսքերը միայն կխորացնեն հոմոֆոբ վերաբերմունքն ու խտրականության դեպքերը: Ստորև նշված են խոսքի օրինակներ, որոնք խրախուսում են հասարակական համատարած անհանդուրժողականություն:

2004թ.-ին ԱԺ «Հայ հեղափոխանակ դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Ալվարդ Պետրոսյանն ասել էր.

«Շատ լուրջ եմ վերաբերվում, որ մենք քրիստոնեական քաղաքակրթության ներկայացուցիչներ ենք, և խորապես հավատում եմ, որ սողմական մեղքերը շատ լուրջ մեղքեր են: Ես նորմալ կին եմ. ես համարում եմ՝ արվամուլ տղամարդը կանանց թշնամի է, ես բնագործ չեմ կարող նրանց ընդունել⁵¹»:

Ոստիկանության օրվա կապակցությամբ, ամենամյա տոնին, որը 2010թ.-ին համընկավ Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա հետ, ՀՀ Ոստիկանության պետ և հետազայում ԱԺ Հանրապետական կուսակցության պատգամավոր Ալիկ Սարգսյանը հայտարարել էր.

«Ոստիկանությունը ամենամաքուրն է և ամենազերծը նման բաներից. ոստիկանությունում իսկական տղամարդիկ են աշխատում ամեն ինչով, և կողմնորոշման որեւէ խախտում, Աստված չանի, երբեք չի նկատվել եւ չի նկատվի⁵²»:

ԱԺ Հանրապետական կուսակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը, անդրադառնալով 2013թ.-ին նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի ստացած քվեներին, հայտարարել էր.

«Նրանք, ովքեր ձայն են տվել Ռաֆֆի Հովհաննիսյանին, չեն գիտակցել, թե ինչպես են վտանգել Հայաստանը: ...Եվ մի մոռացեք, թե ոնց նա գնաց Ծոմակ կոչեցյալի որջը, որ աջակցի նրան⁵³»: Բաբուխանյանն այստեղ նկատի ուներ Երևանում ԼԳԲՏ անձանց ընդունող «DIY» փաբի պայթյունից տուժածներին Հովհաննիսյանի այցին և աջակցությանը (այդ դեպքի վերաբերյալ մանրամասները, տե՛ս հաջորդ բաժնում):

2014թ.-ի Ազգային ժողովի լուսմներից մեկի ժամանակ Բաբուխանյանը վիրավորել էր պատգամավորներից մեկին, ով պաշտպանել էր նույնասեռականներին՝ հավելելով. «Թո՛ղ գրողի ծոցն անցնեն բոլոր կոնչիտաները⁵⁴»:

Անդրադառնալով ընտանեկան բռնության մասին օրենքին՝ 2013 թ.-ին Հանրապետական կուսակցության պատգամավոր Վահրամ Բաղդասարյանը հայտարարել էր, թե նա ավելի, քան համոզված է, որ եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու համար հաջորդը լինելու է համասեռամուլներին պաշտպանելու օրենքը և այդպիսի օրենքները ազգը տանում են պառակտման⁵⁵:

2014թ.-ին ՀՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Գևորգ Դանիելյանն ասել էր.

«Մենք միջազգային փորձագետների տեսակետը հարգում ենք, երբեմն հաշվի առնում, բայց դա չի նշանակում, որ ամեն գնահատական, այդ թվում նաև մասնագիտական, ընդունում ենք կատարման համար: Ինչ վերաբերում է սեռական փոքրամասնությունների հետ կապված խնդրին, ապա մենք հաճախ տեսնում ենք՝ մեր ազգային ավանդույթները այլ

բնույթ ունեն, դրանք համահունչ չեն սեռական փոքրամասնությունների ավանդույթների հետ, հետևաբար, պետք է հաշվի նստեն մեր ազգային ավանդույթների հետ: Կտրականապես դեմ եմ այդ բնույթի ձևական հավասարություններին: Սա հավասարություն չէ, այլ շահերի լուրջ բախում: Գոյություն ունեն երեխաների և ծնողների շահեր: Եթե համասեռամոլների ամուսնության իրավունքն ենք օրինականացնում՝ երեխաների շահերն ենք ոտնահարում: Իսկ եթե այս հարցը ոչ միայն տեսական, այլ գործնական հարթությունում փորձեն քննարկել, ապա մենք պատրաստ ենք նաև դրան, որ բերենք փաստարկներ, որ վերջին հաշվով պետք չէ անտեսել երեխաների շահերը⁵⁶» :

2015թ.-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Նաիրա Չոհրաբյանն ասել էր.

«Ես կանեմ հնարավորը, որպեսզի Հայաստանում իրենք չկարողանան իրենց մետաստազները տարածել. դա ես ասում եմ բաց և հրապարակային: Ինչպես իմ շատ գործընկերներ, ես չեմ առաջարկում նրանց, ասենք, խարույկի վրա այրել կամ «իզգոյացնել» հասարակությունից, բայց ես ուղղակիորեն ընդունում եմ, որ որքան մեր հանրությունը զերծ մնա նման այլասերվածությունից, այնքան մենք կկարողանանք մեր ազգի բարոյաբանական կարագիրը պահպանել: Ինձ համար բացարձակապես ընդունելի չէ այդ ամենը: Ես գիտեմ, որ կա բնության օրենք, Աստծո օրենք, պատվիրաններ, և այն խավը, որը կգնա Աստծո պատվիրաններին դեմ, կարժանանա Աստծո պատժին: Այո՛, նրանց մեջ երևի մի խավ կա, որ գենետիկական հիվանդ է, մեկ այլ խավ՝ հոգեկան շեղմունք ունի, բայց պետք չէ տուրք տալ...⁵⁷» :

2015թ.-ին «Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Ռուբեն Հակոբյանն ասել էր.

«Մենք երբեմն զրկում ենք մեզ ինքնապաշտպանական հնարավորությունից՝ չգիտեմ ինչ-ինչ արժեքներ պահպանելով: Այն բոլոր իրավունքները, որոնք հակասում են ազգի, պետության, անվտանգության իրավունքին, դրանք մեզ համար գոյություն չպետք է ունենան: Ինձ այսօր պաշտպանող զինվոր է պետք, ոչ թե միջազգային կառույցներից օգտվող եւ ինչ-որ աղանդների մաս կազմող մեկը, ով ասում է՝ չեմ ուզում ծառայել⁵⁸»:

2015թ.-ին Հակոբյանը, անդրադառնալով ՄԻՊ զեկույցին մատնանշեց, որ կան որոշ հակասություններ համասեռամոլների իրավունքների պաշտպանության առումով. «Աստվածաշունչն ասում է՝ գնացե՛ք, բազմացե՛ք, ու այս պարագայում ստացվում է հակասություն: Հիմա ի՞նչ՝ Աստվածաշունչը օրենքից դո՞ւրս համարենք⁵⁹»:

2015թ.-ին ԱԺ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Արսեն Բաբայանը, մեկնաբանելով Հայաստանում «օրենքով գողերի» ու քրեական հեղինակությունների ժամանման լուրերին, ասել էր. «Լավ է «գողականներ» գան, քան համասեռամոլներ⁶⁰»:

2015թ.-ին, մի շարք նախարարների խնդրել էին մեկնաբանել, թե ինչպես են վերաբերվում ԼԳԲՏ մարդկանց: Ստորև նշված են նրանց արձագանքների օրինակները.

⁵⁸ <http://goo.gl/f064Zy>

⁵⁹ <https://www.a1plus.am/1413524.html>

⁶⁰ <http://armtimes.com/hy/article/58030>

⁶¹ <http://goo.gl/ixpvKb>

⁶² <http://goo.gl/LtJwmg>

⁶³ <http://goo.gl/JByGZK>

⁶⁴ <http://www.lgbtnews.am/en/being-a-conservative-mp-vahe-enfiayan-is-against-same-sex-relationships>

Հանրապետական կուսակցության պատգամավոր Տաճատ Վարդապետյան. «Ինձ այդպիսի հարցեր մի՛ տվեք, դրանք ինձ համար ամենաատելի մարդիկ են: Ես հիմա գուցե սեռական բնույթի հայիոյանք տամ այդ մարդկանց», - հավելելով, որ նրա համար մոլորակում չկա որևէ մեկը, որն ավելի զգվելի է, քան ԼԳԲՏ մարդիկ⁶¹:

Հանրապետական կուսակցության պատգամավոր Մուրադ Մուրադյան. «Ամոթ ա, ամոթ ա, ինձ եդպիսի հարցեր մի՛ տվեք, ես տենց բաներին դեմ եմ, գնացե՛ք, ուրիշ պատգամավորներին հարցրեք: Գնա գրի, ասա՝ Մուրադ Մուրադյանը դեմ ա: Ամոթ ա, հայ ժողովրդին ամոթ ա, ինձնից հեռու⁶²»:

Հանրապետական կուսակցության պատգամավոր Ռուզաննա Մուրադյանն ասել է, թե ԼԳԲՏ մարդկանց իրավունքները չի ճանաչում որպես մարդու իրավունքներ⁶³:

2016թ.-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Վահե Էնֆիաջյանն ասել է. «Յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում ինչպես ապրել, բայց միևնույն ժամանակ եկեք արձանագրենք, որ անձնական մոտեցումները չպիտի ազդեն ու ներգործեն այլ մարդկանց կյանքի վրա, որպեսզի նրանց վնասակար գործունեության ազդեցությունը չներթափանցի հասարակության մեջ: Եթե, օրինակ, նման անձինք ամուսնանան ու երեխա որդեգրեն, ձեր կարծիքով այդ երեխան իրեն ինչպե՞ս է զգալու հասարակության մեջ. արդեն խեղաթյուրում է գնում, բոլոր բիոլոգիական նորմերի խախտում է լինում⁶⁴»:

2016թ.-ին ՀՀԴ կուսակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանն ասել էր. «Ընտանիքում պիտի սերունդներ առաջանան, աճեն, բազմանան, իսկ այդպիսի ընտանիքը բազմացմանը չի նպաստում: Ինչ վերաբերում է չբերությանը, դա հիվանդություն է: Իսկ ԼԳԲՏԻ անձինք ընտանիք կազմելու բնական հատկանիշը չունեն, որովհետև իրենցով մարդկությունը չի բազմանում⁶⁵»:

2017թ.-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Վարդևան Գրիգորյանն ասել էր. «Եթե համասեռամոլության մասին օրենք բերվի, իհարկե, ես դեմ եմ լինելու ու երբեմիցե չեմ կարող կողմ լինել: Խոսում են մարդու իրավունքներից, բայց այստեղ արդեն մենթալիտետի, մոտեցման հարց է⁶⁶»:

2017թ.-ին Հանրապետական կուսակցության պատգամավոր Ալիկ Սարգսյանն ասել էր.

«Ինչ է ասել համասեռամոլ, այսինքն՝ ի՞նչ, թույլ տանք, որ նրանք ընտանիք կազմե՞ն, ամուսնանան, եթե նման օրենք բերեն, ապա այդ օրերին հիվանդ կլինեմ ու նիստի չեմ գա՝ լավագույն տարբերակը⁶⁷»:

Արդարացնելով ատելության հիմքով հանցագործությունները

Երևանում «DIY» փաբը պայթեցվել է 2012թ.-ի մայիսի 8-ին՝ մի խումբ երիտասարդների կողմից: Հանցագործները հաստատել էին, որ իրենց արարքը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ակումբի սեփականատեր Արմինե Օգանեզովան (հայտնի՝ որպես Ծոմակ) այցելել էր Թուրքիա և մասնակցել գեյ շքերթին, և որ ակումբում հաճախակի հավաքվում էին ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներ: Այդ երիտասարդներին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով,

այն է՝ «ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն առանձնապես խոշոր չափերի վնաս է պատճառել»:

Մի շարք պետական պաշտոնյաներ դիրքորոշումներ էին հայտնել՝ արդարացնելով հանցագործությունը՝ կատարված տուժածների ենթադրյալ սեռական կողմնորոշման հիման վրա: ՀՀԿ կուսակցության պատգամավոր Արթուր Աղաբեկյանն ասել էր. «Ես հպարտ ու ոգևորված եմ, որ կան երիտասարդներ, ովքեր անհանդուրժող են հասարակությունն այլասերող համասեռամոլների, աղանդավորների, այլ շեղումներ ունեցող խմբերի հանդեպ⁶⁸»:

Հանրապետական կուսակցության պատգամավոր Էդուարդ Շարմազանովն ասել էր.

«Բոլոր նրանք, ովքեր փորձում են իրենց պաշտպանության տակ առնել մեր հասարակությունը այլասերող համասեռամոլներին, պղծում են հայերիս ազգային նկարագիրը:

Ես, որպես Հայաստանի քաղաքացի և ազգային-պահպանողական կուսակցության անդամ, միանգամայն ճիշտ ու արդարացված եմ համարում երկու հայ երիտասարդների ընդվզումը մեր երկրում այլասերության որջ ստեղծած և հասարակությունն իր բարոյական արժեքներից հեռացնելու նպատակ ունեցող համասեռամոլների դեմ: Իսկ մարդու իրավունքների այն պաշտպաններին, ովքեր այս միջադեպի առիթով ջանում են Եժան դիվիդենտներ շահել, կոչ եմ անում՝ պաշտպանել նախեւառաջ համամարդկային ու ազգային արժեքները⁶⁹»:

2018թ.-ի ամռանը 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳԲՏ անձիք և ակտիվիստներ, հանգստանալիս են եղել Շուռնուխ գյուղում: Շուռնուխի և Գորիսի մի խումբ բնակիչներ հավաքվել էին տան մոտ և փորձել էին սադրել տան սեփականատիրջը՝ նրա հետ վեճի բռնկվելու: Նրանք բռնություն էին ք գործադրել հյուրերի նկատմամբ՝ անվանելով «գոմիկներ», և պահանջել հեռանալ գյուղից: Երբ տուժողները դուրս էին եկել տանից, քաղաքաբնակները շարունակել էին բռնանալ՝ հայհոյանքներով և ֆիզիկական հարձակումներով հարվածելով ու նրանց վրա քարեր նետելով: Երիտասարդները փորձել էին փախչել՝ իրենց պաշտպանելու համար: Սակայն իրավախախտները հետապնդել էին նրանց՝ քարեր նետելով նրանց վրա, հարվածներ հասցնելով նրանց, վնասելով նրանց ճամպրուկները:

Տուժածները ստացել էին բազմաթիվ մարմնական վնասվածքներ, ներառյալ՝ գլխի և քթի բաց վնասվածք, ոտքերի և կրծքավանդակի սալջարդեր և այլ վնասվածքներ:

Շուռնուխի բռնությանը հետևեց ատելության խոսքի մեծ ալիք՝ խթանելով անհանդուրժողականություն և թշնամանք:

Էդուարդ Շարմազանովը, Ազգային ժողովում իր ելույթի ընթացքում նոր կառավարությանը քննադատելիս, հայտնել էր հետևյալը. «Ազգային և քրիստոնեական արժեքներն ամրապնդելու փոխարեն, մենք ստացանք հարձակում Վեհարանի և Վեհափառի վրա, ինչպես նաև Շուռնուխում համասեռամոլության քարոզ⁷⁰»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանն ատելության խոսքեր է հնչեցրել, ինչպես իր ֆեյսբուքյան էջում, այնպես էլ՝ իր ելույթներում: Ֆեյսբուքում նա հրապարակել է. «Չգիտեմ՝ ինձ ով կմեղադրի և ինչքան, բայց վայրկյան առաջ պետք է մեր Սուրբ հողից համատեղ ջանքերով դուրս մղենք (մեղմ եմ ասում) համասեռամոլներին, աղանդավորներին և նրանց պաշտպաններին...»

Գևորգ Պետրոսյանն Ազգային ժողովում իր ելույթի ընթացքում հայտարարել էր.

«Մեզ համար ամենամեծ սպառնալիքը դա մեր ավանդական ընտանիքի հավանական խոյահարումն է: Ես ցանկանում եմ, խնդրում եմ, որ մենք բոլորս համատեղենք մեր ուժերը և իրականացնենք մեզանից կախված ամեն օրինական և թույլատրելի հնարավորը մեր ավանդական ընտանիքներն պահպանելու համար... Պատերազմող երկիր ենք, շատ հետաքրքիր է՝ արական սեռի երկու ներկայացուցչի ինչպիսի՞ շփումից պետք է գոյանա սերունդ, որն ապագայում ստանձնի սահմանների պաշտպանությունը: Ձեզ հայտնի՞ է այդպիսի միջոց: Ես, որքանով գիտեմ, այդպիսի միջոց չկա⁷¹»:

Ատելության խոսքն արդարացնող մեկնաբանությունները կարող են ունենալ վտանգավոր հետևանքներ, հատկապես երբ դրանք արվում են պետական պաշտոնյաների կողմից, ովքեր ներկայացնում են պետությունը և օրենսդիր իշխանությունը: Այդպիսի խոսքերն, անխուսափելիորեն, ազդեցություն ունեն իրավակիրառ մարմինների վրա, որոնց գործառույթը դեպքերի քննություն իրականացնելն է:

Այն ստեղծում է անպատժելիության և բռնությանը պետական մակարդակի աջակցության մթնոլորտ, որը շատ հավանական է, որ կնպաստի հետագա ատելության հիմքով հանցագործությունների կատարմանը: Որպես այդպիսին, ատելության արդարացումը ինքնին պետք է համարել ատելության խոսք և պատասխանատվության ենթարկել:

Ատելության խոսքը Հայաստանում 2018թ-ի մայիսին տեղի ունեցած Թավշա հեղափոխությունից հետո

Ատելության խոսքի մի շարք օրինակներ, որոնք դրսևորվել են 2018թ-ին Թավշա հեղափոխությունից հետո, ներկայացված են այս բաժնի առաջին էջերում: Ստորև բերված են լրացուցիչ օրինակներ, որոնցում պաշտոնյաները տարածում են ատելության խոսք, որը չի պարունակում գործողությունների ուղղակի հրահրում: Հանրապետական կուսակցության պատգամավոր Էդուարդ Շարմազանովն ասել էր. «Մենք պետք է իրականացնենք մեր ծրագրերը, ոչ թե քարոզենք ԼԳԲՏ-ներ⁷²»: Հանրապետական կուսակցության պատգամավոր Վահրամ Բաղդասարյան. «Ցավոք կան համապատասխան կոչեր՝ համասեռամուլների իրավունքները ճանաչելու և նրանց ստատուս տալու վերաբերյալ⁷³»:

Հանրապետական կուսակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյան. «Դատական քաջքշուկը ձգվելով տարիներ՝ հասել է մեր օրերին: Ի դեպ, Կոնչիտան արդեն ինքն է հայտարարել, որ դժգոհ էր իր բեմական կերպարանքից եւ դուրս է եկել դրանից: Սակայն Կոնչիտայի «վկաները» ոչ մի կերպ չեն հանդարտվում, կատարելով իրենց պատվիրատուների կեղտոտ հանձնարարությունները՝ Հայաստանում ազատ խոսքը եւ ազատ մամուլը ոչնչացնելու եւ ամեն ազգային ու քրիստոնեականը խորտակելու նպատակով⁷⁴»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Վարդան Ղուկասյան. «Մի բան կարող եմ ասել՝ նմանատիպ սրբապիղծներին առաջներում վառել են, արտաքսել են երկրից: Ես Աստվածաշնչով եմ նայում, որից այն կողմ ուրիշ բան չկա: Մի բան գիտեմ, որ Սողոմ-Գոմոր քաղաքներն ավիրվեց այդ համասեռամուլների ու նմանատիպ բաների պատճառով: Հիմա ի՞նչ են ուզում՝ անեծքի տա՛կ ընկնենք մենք: Մոռացել ենք, թե ինչ է ասել Աստվածաշունչը, թե ինչ ձեւի պետք է լինի ամուսնությունը, ինչ ձեւի պետք է լինի

հավատք: Ով այդ ամենից շեղվում է, նա սատանայի կամակատարն ու գործակիցն է: Ես դրանց համայն մարդկության թշնամին եմ համարում: Եվ համոզված եմ, երբ ամբողջ աշխարհը դա ընդունեց, աշխարհի վերջը կգա⁷⁵»: Նախքան Թավշյա հեղափոխությունը, Հանրապետական կուսակցությունը հանդիսանում էր ՀՀ իշխող կուսակցություն, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը երկրորդ ամենամեծ կուսակցությունն էր խորհրդարանում: Այս իրավիճակը փոխվեց հեղափոխությունից հետո: Հանրապետական կուսակցությունը կորցրեց գործադիր իշխանությունը և սկսեց մանիպուլացնել օգտագործելով խոցելի հարցեր, ինչպիսին է՝ Հայաստանում ԼԳԲՏ անձանց կարգավիճակի հարցը՝ նոր կառավարությանը վարկաբեկելու նպատակով: Օգտագործելով պոպուլիստական մանիպուլատիվ մեթոդներ, ԼԳԲՏ հարցերն արհեստականորեն քաղաքական դաշտ էին բերվում: Իրենց խոսքերում և ելույթներում Ազգային ժողովի Հանրապետական խմբակցության պատգամավորները վարչապետ Նիկոլ Փաշինյանից պահանջեցին արտահայտել իր դիրքորոշումն այդ հարցերի վերաբերյալ: Խոսակների դերը փոխվեց այս դեպքում:

Եթե նախկինում Հանրապետական կուսակցությունն ուներ անսահմանափակ իշխանություն, ապա՝ հիմա միայն վերջինս է մեծամասնություն կազմում խորհրդարանում: 2018թ.-ին Վարչապետը հակասական արտահայտություններ հնչեցրեց ԼԳԲՏ իրավունքների շուրջ՝ ասելով. «Ինձ համար որպես վարչապետ և մեր կառավարության համար, որքան քիչ այդ հարցը բարձրացվի, այնքան՝ ավելի լավ... դա գլխացավանք է⁷⁶»:

⁶⁵ <http://www.lgbtnews.am/en/go-praise-lgbti-people-somewhere-else-armen-rustamyan/>

⁶⁶ <https://www.iravunk.com/news/46449>

⁶⁷ <https://www.iravunk.com/news/46114>

⁶⁸ <https://www.aravot.am/2012/05/18/297566/>

⁶⁹ <https://iravunq.wordpress.com/2012/05/17/aa44/>

⁷⁰ <https://www.youtube.com/watch?v=Go2RLWcK5dM>

⁷¹ <https://www.youtube.com/watch?v=8jsczNaslCo>

⁷² <https://168.am/2018/10/13/1025070.html>

⁷³ <https://hraparak.am/post/5b51dce8eb246006af710791>

⁷⁴ <https://www.iravunk.com/news/72604>

⁷⁵ <https://www.iravunk.com/news/66479>

⁷⁶ <https://168.am/2018/10/24/1030762.html>

5. Եզրակացություն

Ղեկավարի ներկայացման ժամանակահատվածը ցույց է տալիս, որ ատելության խոսքը պետական պաշտոնյաների կողմից ոչ միայն արտահայտվել է շարունակաբար, այլև նաև տարիների ընթացքում ավելի ու ավելի համատարած բնույթ է կրել: Ավելի քան 14 տարի Չայաստանը ձախողել է մշակել իրավական մեխանիզմներ՝ պայքարելու ատելության խոսքի դեմ, միևնույն ժամանակ պաշտոնյաները տարածել են ատելության խոսքն ու խտրականությունը: Այդ պաշտոնյաներից ոչ մեկը չի կորցրել իր պաշտոնը, որպես իրենց ատելության շարժառիթով հանցագործության կամ խտրականություն հրահրող կամ արդարացնող խոսքի արդյունք: Իրենց դերը պետական կառավարման համակարգում «կանաչ լույս» է տալիս ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության համար և ստեղծում է անպատժելիության մթնոլորտ:

Ատելության խոսքի պոտենցիալ վտանգավոր հետևանքների ռիսկերը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել կոնտեքստը, թիրախ խումբը կամ լսարանը, ելույթի քանակներն ու մոտեցումները, և խոսակի դերը:

Ատելության հիմքով հանցագործությունները, ատելության շարժառիթով դեպքերը, և մարդու իրավունքների ոտնահարումները Չայաստանում հիմնված սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության վրա, խորը մտահոգության տեղիք են տալիս: Պետության նման վարքագիծը ցույց է տալիս, որ չկա քաղաքական կամք պայքարելու նմանատիպ վտանգավոր երևույթների դեմ:

Հարկ է նշել, որ ատելության խոսքի ուսումնասիրված դեպքերից ոչ մեկը քննության առարկա չի հանդիսացել կամ որևէ ձևով հասցեագրվել իրավապահ մարմինների կողմից: Արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո «Բարգավաճ Չայաստան» կուսակցության ներկայացուցիչները շարունակել են ներկայացված լինել ՀՀ Ազգային ժողովում միևնույն պատգամավորներով:

6. Առաջարկություններ պետական մարմիններին

Օրենսդրական մակարդակում

- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել ատելության խոսքի հասկացությունը, սահմանել ատելության խոսքի արգելքն և պատասխանատվությունը, ատելության և անհանդուրժողականության հրահրումը՝ անհատի որոշակի պաշտպանված հատկանիշների շարժառիթով, ներառյալ՝ LQFS անձանց դեմ:

- Կատարել օրենսդրական փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ սահմանելով քրեական պատասխանատվություն բռնություն, թշնամանք կամ խտրականություն հրահրող խոսքի համար, ներառյալ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով: Պետական պաշտոնյաների կողմից հնչեցվող ատելության խոսքը նախատեսել որպես ծանրացնող հանգամանք:

- Կատարել օրենսդրական փոփոխություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ նախատեսելով վարչական պատասխանատվություն պետական պաշտոնյաների կողմից հնչեցվող ատելության խոսքի համար, որոնք պարունակում են LQFS անձանց հոգեկան ամբողջականությունը խախտող արտահայտություններ կամ որոնք արդարացնում են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով հանցագործությունները:

- Խուսափել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի օգտագործումից:

- Հրապարակայնորեն դատապարտել ատելության խոսքը՝ հիմնված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա:

- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ կանխելու ատելության խոսքը՝ հիմնված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վրա:

- Ներառել ատելության խոսքի դեմ պայքարը մարդու իրավունքների պաշտանության ազգային ռազմավարությունում և դրանից բխող գործողությունների պլանում ներկայացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

- Ստեղծել էթիկայի հանձնաժողով՝ ՀՀ Ազգային ժողովում պատգամավորների կողմից ատելության խոսքի հնչեցման յուրաքանչյուր դեպքում:

- Իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների համար ատելության խոսքի նույնականացման և ատելության խոսքի դեպքերի քննության առանձնահատկությունների, ինչպես նաև, ատելության խոսքի զոհերի հետ աշխատանքի վերաբերյալ:

7. Հասկացողությունների ցանկ

ԵԱՀԿ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԽ Եվրոպայի խորհուրդ

ՌԽՎԿ Ռասսայական խտրականության դեմ կոնվենցիա

ԼԳՔՏ Լեքսի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

ԺՀՄԻԳ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ՌԱԵՀ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով

ՔՔԻՄԴ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՄԻԵԴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻԵԿ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա

ՏՄՄԻԿ ՄԱԿ–ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե

8. Հիմնական հասկացողություններ

Խտրականություն – անձի իրավունքների և ազատությունների ցանկացած հիմքով տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության, որն ունի անձի իրավունքների և հիմնարար ազատությունների՝ հավասար հիմունքներով ճանաչումը, իրականացումը կամ դրանցից օգտվելը ոտնահարելու կամ սահմանափակելու նպատակ կամ ազդեցություն:

Սեռական կողմնորոշում – անհատի ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հրապուրանքը նույն կամ հակառակ սեռի անձի հանդեպ:

Գենդերային ինքնություն – վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելվածը:

Գեյ – (նույնասեռական տղամարդ) տղամարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և

սեռական հակուճներ ունի այլ տղամարդու նկատմամբ:

Քիսեքսուալ – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակում ունի և՛ նույն, և՛ հակառակ սեռի անձանց նկատմամբ:

Լեսբի – (նույնասեռական կին) կին, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի այլ կնոջ նկատմամբ:

Տրանսգենդեր – ընդհանրական տերմին, որն օգտագործվում է այն մարդկանց համար, որոնց գենդերային ինքնությունը, արտահայտումը և վարքագիծը տարբերվում են նրանց կենսաբանական սեռի բնութագրական հատկանիշներից:

Ատելություն հիմքով հանցագործություն – քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով:

Նույնասեռական – անձ, ով ունի ռոմանտիկ, հուզական, էրոտիկ և սեռական գրավչություն նույն սեռի անձի նկատմամբ:

Յոմֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զգվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող մարդկանց և նույնասեռականության նկատմամբ:

ԼԳԲՏ համայնք – լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. Այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից:

Պաշտպանված հատկանիշ – անձի կամ անձանց խմբի ընդհանուր հատկանիշ՝ ըստ սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների:

